Զանգեզուրում տասնակնէրը XIX դ. վերջերում կազմվում էին միայն հողաբաժանության ժամանակամիջոցի համար և կորցրել էին այն հարատև տնտեսական, հարկաբաշխական և վարչա-ոստիկանական լիազորությունները, որ նրանց հատկացվում էին պարսկական տիրապետության օրով։ Նրանք որոշ չափով պահպանվում էին նախկին Երևանյան նահանգում, առավելապես ոռոգչական տնտեսություն վարող գյուղերում, նաև ռուսական իշխանության հաստատվելուց հետո[29], երբ նրանց լիազորությունների մի մասը անցավ նորընտիր գյուղական մարմիններին։ Մինչև XX դ. սկզբները երևանյան գյուղերում բացի հողերի վերաբաշխումից դաղբաշինէրը կարգավորում էին նաև առուների ջրի բաշխումը տասնակի անդամների մեջ և որոշում էին ջրի օգտագործման հերթը, պետական տուրքերի, ինչպես և հասարակական պարտավորությունների բաշխումը— ձի, սայլ և այլ փոխադրական միջոցներ պետական պետքերին ներկայացնելը, առուների և ճանապարհների նորոգումը և այլն։ Զանգեզուրում տասնակնէրի ներկայացուցիչներն այդպիսի լիազորություններ ունեին մելիքների և խաների օրով։ Հայտնի է, որ դաղբաշինէրը մասնակցում էին գյուղի քöխվայի հետ գյուղի դրամական տուրքերի և պարտադիր աշխատանքների բաշխմանը մի քանի գյուղերում նույնիսկ մինչև XIX դ. վերջերը և XX դ. սկզբները։ Այդ բաշխման համար գումարում էին բոլոր վճարելիքները, թե՛ պետական, թե՛ հասարակական և թե՛ պատահական ծախքերը, և բաժանում էին հավասարապես բոլոր հարկատու միավորների միջև։ Որպես միավոր մեծ մասամբ ընդունվում էր կրլöխը, որով ղեկավարվում էին նաև հողաբաժանության միջոցին, ավելացնելով սակայն մի-մի գլուխամեն մի ծխի գլուխների թվի վրա։ Ռուսական գյուղական օրենսդրությունը նոր մարմիններ ստեղծելով գյուղի ներքին կառավարության համար՝ բոլորովին նսեմացրեց տասնապետների դերը այդ կազմակերպության մեջ. առավել ևս, որ հողաբաժանության գործն էլ այդ միջոցին շատ և շատ բարդանում էր, քանի որ խոշոր գերդաստանների քայքայման հետևանքով մանր տնտեսությունների թիվը աճում էր։ Դրա հետ զուգընթացաբար ավելի և ավելի մանրանում էին հողաբաժիններն և ավելի խճճվում էին նրանց տների միջև հաստատվող փոխհարաբերությունները։ Տասնակային սիստեմը արդեն չէր բավարարում նոր պահանջներին և դաղբաշինէրը տեղի տվին համայնքից ընտրված նոր մարմինների առջև, որոնք ղեկավարվում էին հողաբաժանության միջոցին այլ սկզբունքներով։ Սակայն մինչև սովետական կարգերի հաստատումը գյուղի սեփականություն կազմող վարելահողերի և արոտավայրերի ամբողջ տարածությունը, ջուրը, կավահողերը, բնական բուսականությունը և վայրի կենդանական հարստությունը գտնվում էին համայնքի բոլոր անդամների հավասար տրամադրության տակ—մի իրավական դրություն, որը հատուկ է արյունակցությամբ իրար հետ շաղկապված տոհմից ծագած համայնքին։

Այդ նույն ծագումն ունի և ամբողջ համայնքի բարոյական պարտականությունը՝ իր չքավոր անդամների մասին որոշ չափով հոգատար լինելու։ Բոլոր գյուղերում բացի հնձից հետո արտում մնացած հասկերը հավաքելուց, որը պիտի բաժին թողնվեր մեկ-երկու ամիսների ընթացքում չքավորներին և այդ պատճառով այդ ժամանակամիջոցում արգելվում էր այդ հնձած արտի

[29] *Егиазаров С. А.*, Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии (Свод материалов по изучению экон. быта гос. крестьян Закавк. края), т. I, էջ 34—36)։